

Իսկ ում յիշատակագիր յառաջ վագեալ՝ առեալ իսկ ասէ զԿեսարիա. լաւագոյն գրէ Սմբատ. «ԶԿեսարիոյ սղարիլն, որ՝ իյառ էաժ. եւ դարձաւ ծախեց իւրեանց»:- Յայսմ ժամանակի հաշտութեանն՝ տուեալ է Լեւոնի գիր ընծայութեան Յովհաննու Յետուայ՝ Ասորւոց կաթողիկոսի՝ առ նոյն սուլտան, զի թոյլ տացէ նմա երթալ հաստատել զհոգեւոր իշխանութիւն իւր՝ իկերայ կրօնակցացն որք՝ իկողմանս Կեսարիոյ:

Բագում ամօք յառաջ քան զայտոսիկ (1205), ՝ իժամանակի յորում ըստ հաճութեան կամաց Քահանայապետին՝ ամփոփեալ էր Լեւոն զձեռն իւր յԱնտիոքայ, պարապ գտեալ յարձակեցաւ ՝ իկողմանս Ջահանայ, անդր քան զՄարաշ, ՝ իկերայ գլխաւոր քաղաքին՝ որ մինչեւ ցարդ Ալպստան կոչի, ըստ մերոցս՝ Ապլաստա կամ Ապլասթա, եւ էր ընդ իշխանութեամբ Իզգէտինի միոյ յորդոց Խլիճ-Արսլանայ, որոյ թուի գրկեալ զմիւս եւս եղբայրն՝ Մէլիք, որում ձեռնտու լեալ էր Լեւոն ՝ իմեռանել հօր նոցա եւ մաքառել ընդ միմեանս (1192), ընդարձակելով իսկ զվիճակ սորա. իսկ այժմիկ զչարեալ ընդ Իզգէտտին՝ ասպատակ սփռեալ աւերեաց զսահմանս մայրաքաղաքի նորին, զոր ոչ կարաց ՝ իբուռն առնուլ:

Իսկ ինքն խաղաղացեալ երկուստեք, ՝ իկողմանէ սուլտանացն եւ ՝ ի կողմանէ Անտիոքայ, յետ հաստատելոյն անդ զՌուբէն, ոչ թուլանայր եւ ՝ ի յետին ամս թագաւորութեանն՝ հոգալ եւ ամրացուցանել զերկիրն. վասն որոյ որպէս եւ ՝ իսկզբանէ անտի տէրութեանն մինչեւ առ յապա՝ յաւելոյր զգուշութիւն յամրոցս եւ ՝ ի նրբուղի կածանս լերանց. որովք ըստ վիպասանին,

«Ամրոց բագում դրդեակ շինեալ

Եւ զԿիլիկիա շրջապատեալ»:

Յայտ է թէ եւ դիտանոցս կարգեալ էր, եւ գալստեան թշնամեաց՝ նշանակս ազդարարս. զոր ում ժամանակագիր ասէ՝ զանգակս բազմաթիւ բերդորէիցն, որոց ձայն առ ձայն հնչեալ՝ զօրաժողով առնէին²²³. Բայց յաւելու ծանուցողն կամ գրող բանիս առ այլում, «Թէ հաւանիս՝ ընկալ» գայս.

²²³ Այս են բանքն. «Արիագոյնն Լեւոն տիրեաց 72 բերդից. եւ ասեն թէ ՝ ի 72 բերդն զանկակ կայր. նա երբոր պատերազմն լինէր՝ յայնժամ հնչեցուցանէին նախ ՝ ի Սիս. եւ ՝ ի ձայնէ նշանիցն ճանաչէին, եւ իւրաքանչիւր հնչեցուցեալ, որ լսէին ամենեքեան ՝ ի մի ժամու, եւ ժողովեալ գային, առանց մարդոյ (ազդարարի): Թէ հաւանիս՝ ընկալ»: